Տնտեսական, առևտրի, գիտական և տեխնիկական համագործակցության հարցերով հայ-վիետնամական միջկառավարական հանձնաժողով

Տնտեսական, առևտրի, գիտական և տեխնիկական համագործակցության հարցերով հայ-վիետնամական միջկառավարական հանձնաժողովը հիմնվել է համաձայն 2012թ. հունիսի 8-ին կնքված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կառավարության միջև տնտեսական, առևտրական, գիտական և տեխնիկական համագործակցության մասին» Համաձայնագրի:
2017թ. մարտի 17-ին Վիետնամում կայացել է Տնտեսական, առևտրի, գիտական և տեխնիկական համագործակցության հարցերով հայ-վիետնամական միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստը: Հայկական կողմից հանձնաժողովի համանախագահն է՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Հովհաննես Ազիզյանը: Արդյունքում ստորագրվել է նիստի արձանագրություն և ըստ ոլորտների սահմանվել են հետագա համագործակցության ուղղությունները: